

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԵՐԿՐՅԱ ՓՈՐՁԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ. Լ.

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը նոր մարտահրավերների առջև կանգնեցրեց համաշխարհային տնտեսությունը, երկրների կառավարություններին, քաղաքական գործիչներին և, կարելի է ասել, ողջ մարդկությանը: Սկսեցին հրապարակվել ֆինանսատնտեսական ճգնաժամին նվիրված գիտական հոդվածներ, գրքեր, լայն թափ ստացան ոչ միայն գիտական, այլև ոչ գիտական բազմաշերտ ու բազմաբնույթ քննարկումները, իսկ երկրների օրենսդիր և գործադիր մարմինները գործնական քայլեր ձեռնարկեցին հակաճգնաժամային միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Հակաճգնաժամային միջոցառումները բազմաթիվ են ու բազմաբնույթ, որոնք կարելի է ներառել 2 մեծ խմբերում. 1. դրամական բնույթի միջոցառումներ, 2. ոչ դրամական բնույթի միջոցառումներ: Հակաճգնաժամային միջոցառումների իրականացման ողջ պատասխանատվությունն ու բեռը երկրների կառավարությունները վերցրեցին իրենց վրա՝ առավել կարևորելով շուկայական հարաբերությունների մասնակից պետության կարգավորիչ գործառնության դերն ու նշանակությունը, որն «ազդարարում է» տնտեսագիտական ու քաղաքական նոր մտածելակերպի սկիզբը: Դա վկայությունն է այն բանի, որ ազատական տնտեսության գաղափարախոսությունը մասնակիորեն զրկվում է իր տնտեսական հիմքից և հայտնվում է, այլ կերպ ասած, «խաղից դուրս» կարգավիճակում: Դրա պատճառներն են, մի կողմից՝ ազատական տնտեսության գաղափարախոսության անհամապատասխանությունը ժամանակակից տնտեսության ու քաղաքական համակարգերի պահանջներին, մյուս կողմից՝ ժամանակակից համաշխարհային տնտեսության առավել քաղաքականացումը՝ այն աստիճան, որ աշխարհի շատ երկրների օրենսդիր մարմիններում տնտեսական հայեցակարգերի և իրավական օրենքների նախագծերն այնքան են, վատ առումով, «ձևափոխվում ու կերպարանափոխվում», որ զրկվում են իրենց տնտեսագիտական հիմքից: Դեռ ավելին, քաղաքականացված են նույնիսկ հակաճգնաժամային միջոցառումները, որոնք ներկայումս իրականացվում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների և պետությունների կառավարությունների կողմից:

Հետևաբար, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի կարևորագույն դասերից մեկը պետք է համարել տնտեսության առավելագույն ապաքաղաքականացումը: Տնտեսության քաղաքականացման խորացումը մեծ վտանգ կարող է դառնալ համաշխարհային տնտեսության գլոբալացման ներկա պայմաններում: Տնտեսության առավել քաղաքականացման հետևանքով էր, որ ֆինանսատնտեսական ճգնաժամը ծնունդ առավ հենց ԱՄՆ-ում, որտեղից սկսվե-

ցին խոշորամասշտաբ հակաճգնաժամային միջոցառումները, որոնք իրենց հետագա շարունակություններն ունեցան այլ երկրներում:

Համառոտակի ներկայացնենք աշխարհի (թվով՝ 39) երկրների, ինչպես նաև Եվրոմիության, Արևելյան Ասիայի ու Մերձավոր Արևելքի երկրների հակաճգնաժամային միջոցառումները՝ ըստ միջոցառումների բնույթի (դրամական և ոչ դրամական), որոնք օգտակար կարող են լինել ՀՀ-ում իրականացվող հակաճգնաժամային գործընթացներում:

ԱՄՆ: Դրամական բնույթի միջոցառումների նպատակներից է գոյապահպանության ձգտող ֆինանսական կազմակերպություններին աջակցելը: Այսպես, օրինակ, «խնդրահարույց ակտիվների փրկության ծրագրով» նախատեսված 700 մլրդ դոլարի գումարը պետք է ուղղվի բանկերի խնդրահարույց արժեթղթերի ձեռքբերմանը (ոչ թե հիփոթեքային վարկերի հետգնմանը, ինչպես երբեմն այն ներկայացվում է), որպեսզի խնդրահարույց ակտիվները ցածր գներով չմտնեն շուկա և լրացուցիչ դժվարություններ չստեղծեն բանկերի իրացվելիության հարցում, իսկ կայունացումից հետո ամերիկյան կառավարությունը նշված թղթերի գինը հետ պետք է ստանա բաժնետոմսերի ձևով: Նույնատիպ մոտեցում է կիրառվել նաև վարկային հաստատությունների նկատմամբ՝ AIG վարկային կազմակերպության 79,9% բաժնետոմսերի դիմաց հատկացնելով 85,0 մլրդ դոլարի վարկ, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց՝ 40 մլրդ դոլարի: «Խնդրահարույց ակտիվների փրկության ծրագրի» շրջանակում ամերիկյան կառավարությունը գնել է նաև ֆինանսական հաստատությունների թողարկած էմիսիոն արժեթղթերի զգալի մասը, որը 9 խոշորագույն բանկերի գծով կազմել է 125 մլրդ դոլար: Մասնավորապես Բենք օֆ Ամերիկա բանկին հատկացվել են 20 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ աջակցություն, ինչպես նաև 118 մլրդ դոլար գումարի երաշխիքներ, որոնք հնարավորություն են տալիս բարելավելու բանկի ֆինանսական դրությունը: Ընդհանուր առմամբ, ամերիկյան կառավարությունից աջակցություն ստացած ֆինանսական հաստատությունների թիվը հասել է 317-ի:

Ամերիկյան կառավարության ձեռնարկած հակաճգնաժամային միջոցառումներից արժանահիշատակ է նաև հիփոթեքային բրոքերների ու բանկերի ուղղակի պարտականությունների գնումը, որը բանկերին հնարավորություն տվեց ակտիվացնելու վարկավորումը՝ միաժամանակ ստեղծելով վերահսկիչ հանձնաժողովներ, որպեսզի երաշխավորվի միջոցների նպատակային ծախսումը: ԱՄՆ-ի կառավարությունն աջակցություն է ցուցաբերել նաև ավտոարտադրողներին. Ջեներալ մոթորս և Քրայսլեր ընկերություններին՝ 17,4 մլրդ դոլարի չափով: Ընդ որում, այդ ֆինանսական աջակցությունները կառավարությունը կատարում է միջոցների ծախսն ու խոշոր գործարքները վերահսկելու, ինչպես նաև Ջեներալ մոթորսի ֆինանսական ստորաբաժանում համարվող GMAG LLC- ի 5 մլն. դոլարի արտոնյալ բաժնետոմսերը գնելու պայմանով:

Բնակարանների շուկայում ճգնաժամի հետևանքները մեղմելու և անձնական անվճարունակության պատճառով բնակիչներին բնակա-

րաններից չզրկելու նպատակով կառավարությունը հատկացրել է 100 մլրդ դոլարի աջակցություն: Արժանահիշատակ է նաև տնտեսության ակտիվացման խրախուսման նպատակով 819 մլրդ դոլարի ծրագրի հաստատումը, որից 514 մլրդ ուղղվել է ենթակառուցվածքներին, իսկ 275 մլրդ՝ ֆիզիկական անձանց և բիզնեսի հարկային բեռի թեթևացմանը: Աջակցություն է ցուցաբերվել նաև ուսանողներին (200 մլրդ դոլար)՝ բուհերում սովորող ուսանողների սպառողական վարկավորումը խթանելու համար: Դեռ ավելին, 60 մլրդ դոլար է հատկացվել ուսանողական վարկային շուկային աջակցելու նպատակով՝ բանկերի հաշվեկշիռներից ոչ իրացվելի ակտիվները «մաքրելու» համար:

ԱՄՆ-ի կառավարությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նաև այլ երկրների ֆինանսական հաստատություններին. Եվրոպական կենտրոնական բանկի՝ ֆինանսավորումը 55 մլրդ դոլարից հասցրել է 110 մլրդ, Շվեյցարիայի ազգային բանկին՝ 15-ից 27 մլրդ, իսկ Ճապոնիայի, Անգլիայի ու Կանադայի բանկերի հետ արժույթային գործարքների մասով կնքված համաձայնությունների շրջանակում հատկացրել է համապատասխանաբար՝ 60,40 և 10 մլրդ դոլար: Ասենք, որ վերոնշյալները տվյալ ժամանակաշրջանում ամերիկյան կառավարության ձեռնարկած դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումների խիստ համառոտ թվարկումն են:

Բազմազան են նաև Ամերիկայի ձեռնարկած ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումները: Դրանցից արժանահիշատակ են.

- Ներդրումների խրախուսման նպատակով. ա) ներդրումների ապահովագրման ավելացումը՝ մեկ ներդրողի համար 100-ից մինչև 250 հազ. դոլարի, բ) ներդրումների ապահովագրման կորպորացիայի կողմից բանկերի գրավադրման ապահովագրումը, գ) բանկերի ներդրողներին պետության ապահովագրումը վնասներից:

- Մանկկանցման կանխարգելման նպատակով հիփոթեքային գործակալությունների ազգայնացումը (Fannie Mac և Freddie Mac):

- Փոքր ֆինանսական ինստիտուտներին օգնություն ցուցաբերելու նպատակով Ամերիկյան և Եվրոպական բանկերի կոնսորցիումի կողմից 70 մլրդ դոլար բյուջեով հիմնադրամի ստեղծումը:

- Նոր աշխատատեղերի ստեղծման և միջին խավի եկամուտների պահպանման նպատակով կրթական ծրագրերի և դասընթացների կազմակերպման ակտիվացումը:

- Հաշվեկշիռում գտնվող վարկերի ու արժեթղթերի կորուստները ծածկելու նպատակով 306 մլրդ դոլարի տրամադրումը Giti group-ին, ինչպես նաև պետության երաշխավորությամբ նույն կազմակերպությանը պարտատոմսեր թողարկելու (նաև տեղաբաշխելու) թույլտվություն տալը:

- Աշխատատեղերի ստեղծման նպատակով պետական ենթակառուցվածքների ընդլայնումը և 400 հազար նոր աշխատատեղերի ստեղծման ծրագիրը:

• Ամերիկյան ընտանիքների 95%-ին 1000 դոլարի չափով հարկային արտոնությունների տրամադրումը:

• ԱՄՆ-ի գանձապետարանի կողմից 20 մլրդ դոլարի փոխանակումը Bank of America-ի արտոնյալ բաժնետոմսերի փաթեթի հետ:

• Կառավարությունից օգնություն ստացող ընկերությունների ղեկավարների վարձատրության առավելագույն չափի սահմանումը և այդ ընկերություններն այլ ընկերությունների հետ միաձուլելու արգելումը:

• Վարկավորման շրջանակների ու ծավալների ավելացման պահանջի սահմանումը՝ պետական աջակցություն ստացած բանկերի ու վարկային կազմակերպությունների մասով և այլն:

Ամերիկյան կառավարության կողմից իրականացվող ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումները բազմազան են և նպատակ են հետապնդում. ա) խրախուսելու ներդրումները, բ) կանխելու կազմակերպությունների սնանկացումը, գ) ստեղծելու նոր աշխատատեղեր ու պահպանելու եղածը, դ) պահպանելու միջին խավի եկամուտները, ե) թեթևացնելու ամերիկյան ընտանիքների հարկային բեռը, զ) ակտիվացնելու վարկավորման գործընթացները և այլն:

ԿԱՆԱԴԱ: Դրամական բնույթի միջոցառումներից են.

• 20 մլրդ դոլարի ապահովագրված հիփոթեքային վարկերի հետգնումը կառավարության կողմից, որի դեպքում տեղի է ունենում մասնավոր սեփականության մի մասի փոխակերպում պետական սեփականության:

• Կանադական շուկայում աշխատող ամերիկյան ավտոընկերություններին 3 մլրդ դոլարի փոխատվության տրամադրումը (Ջեներալ մոթորս և Քրայսլեր ընկերություններ):

• Նոր պարտքային պարտավորությունների երաշխիքներ տրամադրելու՝ 179 մլրդ դոլար ծրագրի հաստատումը:

• Տնտեսական ակտիվությունը խթանելու նպատակով բյուջեի դեֆիցիտը 20-30 մլրդ դոլարի հասցնելու ծրագրի հաստատումը՝ մեծացնելով ենթակառուցվածքներին, բնակչին արարությանը հատկացվող գումարները և այլն:

Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումների կանադական տարբերակին բնորոշ են. ա) հիփոթեքային վարկերի գրնումը և այդ մասով մասնավոր սեփականության փոխարկումը պետականին, բ) փոխատվությունների տրամադրումը ավտոընկերություններին, գ) երաշխիքների տրամադրումը, որը սեփականությունը հոգուտ պետության վերաբաշխելու ռիսկեր է պարունակում, դ) տնտեսական ակտիվության խթանման նպատակով բյուջեի դեֆիցիտի մեծացումը:

Կանադայի կառավարությունը ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային մեկ միջոցառում է իրականացրել՝ բանկային վարկի տոկոսադրույքն առաջին դեպքում նվազեցնելով 0,75%-ային կետով և հասցրել է 1,5%-ի, իսկ երկրորդ դեպքում նվազեցրել է 0,5%-ային կետով և հասցրել է 1,0%-ի:

ԵՎՐՈՄԻՈՒԹՅՈՒՆ: Դրամական բնույթի միջոցառումներ: Տնտեսական անկումը կանգնեցնելու նպատակով Եվրոհանձնաժողովը հավանության է արժանացրել 200 մլրդ եվրո ծավալով ֆինանսական խթանների ծրագրի փաթեթը, որը գործելու է ԵՄ տարածքում:

Եվրոմիությունում իրականացվել են հիմնականում ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներ: Դրանք են.

- Բանկերի արտասահմանյան մասնաճյուղերից կապիտալների ներմուծումը:
- Ֆինանսական աջակցության նպատակով հատուկ պետական ֆոնդերի ստեղծումը:
- Պետական միջոցների հաշվին արդյունաբերության կարևորագույն ճյուղերի մասնակի ազգայնացումը:

• Բանկային համակարգին երաշխիքների տրամադրումը:

• Բանկային տոկոսադրույքների իջեցումը:

Փաստորեն, Եվրոմիության հակաճգնաժամային միջոցառումների զգալի մասը ոչ դրամական բնույթի են, որոնց շնորհիվ. ա) բանկերի արտասահմանյան մասնաճյուղերից կապիտալները տեղափոխվում են Եվրոմիություն, բ) ստեղծվում են հատուկ պետական ֆոնդեր, գ) ազգայնացվում է արդյունաբերության առանձին ճյուղերի մի մասը, դ) բանկային համակարգին տրամադրում են երաշխիքներ, ու նվազեցվում են վարկի տոկոսադրույքները:

ԳԵՐՄԱՆԻԱ: Դրամական բնույթի միջոցառումներ՝

• «Ազգային ֆինանսական շուկայի աջակցման ծրագրի» հաստատումը 500 մլրդ եվրո արժողությամբ, որից 400 մլրդ նախատեսված է միջբանկային վարկավորման, իսկ 100 մլրդ՝ ազգային բանկերին վարկային գործունեություն իրականացնելու նպատակով արտոնագրերի տրամադրման համար:

• «Տնտեսության խթանմանը նպաստող ծրագրի» հաստատումը 31 մլրդ եվրո արժողությամբ, որը կազմում է ՀՆԱ-ի 1,25%-ը:

• Սոցալ վճարների և հարկային բեռի նվազեցման նպատակով 10 մլրդ եվրոյից ավել գումարի հատկացումը:

• Պետության կողմից վարկային երաշխիքների տրամադրումը (IKB Deutsche Industriebank-ին 5 մլրդ եվրո արժողությամբ):

• Փոքր ու միջին բիզնեսի վարկավորման նպատակով KFW բանկին 50 մլրդ եվրոյի տրամադրումը:

• Հարկային արտոնությունների ընդլայնումը (2009 թ.՝ 2,9 մլրդ եվրո, 2010 թ.՝ 6,05 մլրդ եվրո):

• Պետության կողմից սնանկացող բանկի (Lloyds TSB-HBOS) 43,4% բաժնետոմսերի գնումը:

• Ֆինանսական շուկայի կայունացման նպատակով «Հատուկ հիմնադրամի» ստեղծումը՝ 500 մլրդ եվրո արժողությամբ, որով նախատեսվում է օգնություն ցուցաբերել բանկերին՝ երաշխիքներ տրամադրելու, բանկերի ռիսկային ակտիվների ձեռքբերման և այլ եղանակներով: Այս պայմաններում պետությունը իրավունք է ստանում ազդելու նաև բանկերի ռազմավարության մշակման վրա և այլն:

Վերոնշյալները վկայում են, որ Գերմանիայի կառավարության դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներին բնորոշ են. ա) բանկերին և տնտեսության իրական հատվածին ֆինանսական մեծ ծավալներով աջակցումը, բ) հարկային արտոնությունների ընդլայնումը, գ) սնանկացող բանկերի ազգայնացումը՝ դրանց արժեթղթերի գնման ճանապարհով, դ) փոքր և միջին ձեռնարկությունների (այսուհետև՝ ՓՄՁ) աջակցության ընդլայնումը և այլն:

Գերմանիայի իրականացրած ոչ դրամական բնույթի միջոցառումներից արժանահիշատակ են.

- Աշխատավարձի սահմանափակումների կիրառումը մինչև 50 հազար եվրո:
- Ընկերությունների վերակազմակերպումների ընթացքում պարզևատրումների ու շահաբաժինների վճարման արգելքի սահմանումը:
- Ավանդների 100%-ոց պետական երաշխիքների տրամադրումը 20 մլրդ եվրոյի շրջանակում:
- Նոր պարտքային պարտավորությունների երաշխիքների տրամադրումը 400 մլրդ եվրոյի շրջանակում:
- 3-4-օրյա աշխատանքային շաբաթվա անցումը ճգնաժամ ապրող ձեռնարկություններում:
- Աշխատանքից հեռացնելու արգելքի սահմանումը ֆինանսական աջակցություն ստացած ձեռնարկություններում:
- Անգործունակ բանկերի ազգայնացումը բանկերի արժեթղթերի օտարման ճանապարհով և այլն:

Գերմանիայի կառավարության ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներին բնորոշ են. ա) աշխատավարձի սահմանափակումների կիրառումը մինչև 50 հազ. դոլար, բ) ճգնաժամ ապրող ձեռնարկություններում զանգվածային կրճատումների արգելքի սահմանումը և 3-4 օրյա աշխատանքային շաբաթվա անցնելը, գ) նոր պարտային պարտավորությունների երաշխիքների տրամադրումը, դ) ընկերությունների վերակազմակերպման ընթացքում պարզևատրումների ու շահաբաժինների վճարման արգելումը, ե) ավանդների 100%-ոց պետական երաշխիքների տրամադրումը և այլն:

ՖՐԱՆՍԻԱ: Դրամական բնույթի միջոցառումներից են.

- «Ներդրումային հիմնադրամի» ստեղծումը՝ 175 մլրդ եվրո ընդհանուր ծավալով, որն ուղղվում է նոր տեխնոլոգիաների ձեռքբերմանը, գիտական հետազոտությունների կատարմանը և այլն:
- «Խթանների ծրագրի» հաստատումը, որի նպատակը ոչ թե ուղղակի օգնության ցուցաբերումն է (այն շատ տարածված է ԱՄՆ-ում), այլ՝ ներդրումային ծրագրերի իրագործումը:
- 11 մլրդ եվրոյի վարկերի հատկացումը և 200 եվրոյի միանվագ տրամադրումը ցածր աշխատավարձ ստացողներին:
- Ազգային բանկերի վերակապիտալացման ծրագրերի հաստատումը 40 մլրդ եվրոյի շրջանակում:
- 5-6 մլրդ եվրոյի օգնությունը մեքենաշինական ձեռնարկություններին՝ իրենց բաժնետոմսերի դիմաց:

• «Ճգնաժամի սոցիալական հետևանքների վերացմանն ուղղված գործողությունների փաթեթի» հաստատումը:

• Գործազուրկների օգնության ծրագրի հաստատումը 2,65 մլրդ եվրոյի շրջանակում:

Այսպիսով, Ֆրանսիայի կառավարության դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներին բնորոշ են. ա) ներդրումային հիմնադրամների ստեղծումը և ծրագրերի հաստատումը, բ) ցածր աշխատավարձ ստացողներին ֆինանսական աջակցության ցուցաբերումը, գ) ֆինանսական աջակցության ցուցաբերումը գործազուրկներին ու կազմակերպություններին և այլն:

Ֆրանսիական կառավարության ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են.

• Նոր կապիտալ ներդրումների ազատումը հարկային պարտավորություններից:

• «Ազգային տնտեսության վերականգնման ծրագրի» իրականացման նպատակով նոր նախարարության ստեղծումը:

• Ավանդների՝ 100%-ով պետական երաշխավորումը՝ մինչև 70 հազ. եվրո ծավալով:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Ֆրանսիայում իրականացված ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներին բնորոշ են. ա) նոր կապիտալ ներդրումների հարկումից ազատումը, բ) ճրգնաժամի պայմաններում այդ նպատակով նոր նախարարության ստեղծումը, գ) ավանդների՝ 100%-ով պետական երաշխավորումը՝ մինչև 70 հազ. եվրո ծավալով և այլն:

ԲԵԼԳԻԱ: Բելգիայի կառավարության իրականացրած դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից է մի շարք բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումը՝ 17 մլրդ եվրո ծավալով, իսկ ոչ դրամական բնույթի միջոցառումներից՝ երաշխիքների տրամադրումը և մինչև 100 եվրո ավանդների վերադարձի պետական երաշխավորումը:

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ: Նիդեռլանդներում իրականացված դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են բանկերի վերակապիտալացման ծրագրի (36,8 մլրդ եվրո) հաստատումը և պարտքային երաշխիքների տրամադրումը (200 մլրդ եվրո), իսկ ոչ դրամական բնույթի միջոցառումներից՝ մինչև 100 եվրո ավանդների պետական երաշխավորումը:

ԱՎՍՏՐԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից է բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումը (15 մլրդ եվրո), իսկ ոչ դրամական են 100%-ով փոքր ու միջին չափերի ավանդների հատուցման պետական երաշխավորումը, պետական աջակցություն ստացած բանկերի գործունեության վերահսկումը, միջբանկային վարկերի ու նոր պարտքային պարտավորությունների երաշխիքների տրամադրումը (75 մլրդ եվրո արժողությամբ):

ԻՍՊԱՆԻԱ: Դրամական բնույթի միջոցառումներից է բանկային ակտիվների գնման հիմնադրամի ձևավորումը (50 մլրդ եվրո), ոչ դրա-

մական՝ ավանդների փոխհատուցման երաշխավորմամբ գործող 20 հազարը 100 հազար եվրոյի հասցնելը և նոր պարտքային պարտավորությունների երաշխիքի տրամադրումը՝ 100 մլրդ եվրո ընդհանուր գումարով:

ՀՈՒՆԳԱՐԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) ազգային բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումը 1,5 մլրդ դոլար արժողությամբ, բ) ՓՄՁ-ների վարկային երաշխիքների տրամադրման ծրագրի հաստատումը 1,3 մլրդ դոլար գումարով, գ) միջոցների պահուստավորումը՝ 1,3 մլրդ դոլար ընդհանուր գումարով, դ) բանկերին 5 մլրդ եվրո արտոնյալ պայմաններով վարկի տրամադրումը: Ոչ դրամական բնույթի միջոցառումներից արժանահիշատակ են. ա) վարկային տոկոսադրույքի նվազեցումը (3%-ով), բ) ավանդների փոխհատուցման ծավալների աճը:

ՇՎԵՅՏԱՐԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) USB բանկի վերակապիտալացումը՝ 5 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ, բ) Ազգային բանկի կողմից USB բանկի ոչ իրացվելի ակտիվների հետգնումը՝ 46 մլրդ դոլար արժողությամբ, գ) էներգամատակարարման նախագծի իրագործումը՝ 290 մլն դոլար ընդհանուր գումարով, դ) մայրուղիների և երկաթուղիների շինարարության նախագծերի իրականացումը՝ 840 մլն. դոլար արժողությամբ: Ոչ դրամական բնույթի միջոցառումներն են. ա) բազային տոկոսադրույքի իջեցումը, բ) ավանդների փոխհատուցման երաշխիքների ավելացումը՝ 30 հազարից հասցվեց 100 հազար կրոնի, գ) աշխատատեղերի ստեղծման ծրագրի իրականացումը՝ հարկային արտոնությունների տրամադրմամբ, որի ընդհանուր արժեքը կազմում է 460 մլն. դոլար:

ԻՏԱԼԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումը 12 մլրդ եվրո գումարով, բ) ՓՄՁ-ների, ենթակառուցվածքների ու բանկերի իրացվելիության ծրագրի հաստատումը, գ) էներգամատակարարման նախագծի իրագործումը 290 մլն դոլար ընդհանուր գումարով, դ) ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին 80 մլրդ եվրո գումարի տրամադրման ծրագրի հաստատումը, դ) տնտեսության աջակցման ծրագրի հաստատումը՝ 40 մլրդ եվրո գումարով, ե) գործազուրկների օգնության ծրագրի հաստատումը, իսկ ոչ դրամական բնույթի միջոցառումներն են. ա) պարտքային պարտավորությունների գծով երաշխիքների տրամադրումը, բ) ավանդների փոխհատուցման երաշխիքների տրամադրումը մինչև 10 հազար եվրոյի շրջանակում:

ԿԻՊՐՈՍ: Կառավարությունն իրականացրել է դրամական և ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային մեկական միջոցառում: Առաջինը ազգային բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումն է՝ 2 մլրդ եվրո գումարով, իսկ երկրորդը՝ մինչև 100 հազար եվրո գումարով ավանդների փոխհատուցման երաշխավորումը:

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ: Այստեղ ևս իրականացվել է դրամական և ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային մեկական միջոցառում՝ բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումը՝ 2,9 մլրդ եվրո գումարով և ավանդների փոխհատուցման երաշխավորումը մինչև 100 հազար եվրո գումարով:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. բանկերի վերակապիտալացման ծրագրի իրականացումը 4 մլրդ եվրո արժողությամբ, ոչ դրամականի բնույթի են՝ սնանկացող բանկերի ազգայնացումը, վճարունակության նվազագույն գործակցի բարձրացումը մինչև 8%:

ՀՈՒՆԱՍՏԱՆ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) ազգային բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումը՝ 5 մլրդ եվրո ընդհանուր գումարով, բ) պետական պարտատոմսերի թողարկումը, իսկ ոչ դրամական բնույթի միջոցառումներից են. ա) 100%-ով ավանդների փոխհատուցման պետական երաշխիքի տրամադրումը, բ) աշխատանքի շուկայի աջակցության ծրագրի հաստատումը՝ 10 հազար նոր աշխատատեղեր ստեղծելու նպատակով, գ) նոր պարտքային պարտավորությունների երաշխիքների տրամադրումը՝ 150 մլրդ եվրո գումարով:

ՍԼՈՎԵՆԻԱ: Սլովենիայի կառավարությունն իրականացրել է միայն ոչ դրամական բնույթի, այն էլ ընդամենը 2 միջոցառում. ա) մինչև 22 հազ. եվրո ավանդների փոխհատուցման երաշխավորումը և բ) նոր պարտքային երաշխիքների տրամադրումը:

ԲՈՒԼԴԱՐԻԱ: Այստեղ նույնպես իրականացվել է միայն ոչ դրամական բնույթի ընդամենը 2 միջոցառում. ա) մինչև 50 հազ. եվրո ավանդների փոխհատուցման երաշխավորումը, բ) բանկում առկա կանխիկ գումարի 50%-ի չափով պարտադիր պահուստների ձևավորումը:

ԼԵՀԱՍՏԱՆ: Իրականացվել են միայն ոչ դրամական բնույթի միջոցառումներ, որոնցից արժանահիշատակ են. ա) մինչև 50 հազ. եվրո ավանդների փոխհատուցման երաշխավորումը, բ) բյուջետային ծախսերի կրճատումը 5,6 մլրդ դոլարով՝ ի հաշիվ ենթակառուցվածքների ու նախարարությունների ծախսերի խնայողության, գ) նոր ավտոմեքենաների պահանջարկի պահպանման նպատակով նոր ավտոմեքենա գնողներին ԱԱՀ-ի վերադարձի ապահովումը:

ՌՈՒՄԻՆԻԱ: Միակ և այն էլ ոչ դրամական բնույթի միջոցառումը ավանդների փոխհատուցման երաշխավորումն է մինչև 50 հազար եվրոյի շրջանակում՝ նախկին 20 հազար եվրոյի դիմաց:

ՍԼՈՎԱԿԻԱ: Այստեղ ևս իրականացվել են միայն ոչ դրամական բնույթի միջոցառումներ. դրանք ընդամենը երկուսն են. ա) ավանդների 100%-ով փոխհատուցման երաշխիքների տրամադրումը, բ) վարկերի և, մասնավորապես, հիփոթեքայինի տոկոսադրույքների նվազեցումը:

ՉԵԽԻԱ: Իրականացվել են ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական բնույթի միջոցառումներ, որոնք, սակայն, ունեն խիստ սահմանափակ ընդգրկում: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) հարկերի կրճատումը, բ) ՓՄՁ-ներին ու ավտոարտադրողներին արտոնյալ վարկերի տրամադրումը և այլն: Տնտեսական ռեցեսիայի դեմ Չեխիան հատկացնում է 2,44 մլրդ եվրո գումար: Ոչ դրամական բնույթի միջոցառումներից են. ա) մինչև 90 հազ. եվրո ավանդների փոխհատուցման երաշխավորումը, բ) վարկային տոկոսադրույքների նվազեցումը (2,25%-ից մինչև 1,75%):

ԻՍԼԱՆԴԻԱ: Իրականացվել է ոչ դրամական բնույթի ընդամենը երկու միջոցառում. ա) խոշոր բանկերի ազգայնացումը, բ) արտաքին փոխառություններ վերցնելու երաշխավորումը:

ՇՎԵԴԻԱ: Շվեդիայի կառավարության ձեռնարկած հակաճգնաժամային միջոցառումները եղել են հիմնականում դրամական բնույթի. ա) ֆինանսական հատվածի 152,2 մլրդ եվրոյի օգնության ծրագրի հաստատումը, բ) ավտոարտադրողների (Volvo Group և Saab AB) 2,9 մլրդ եվրոյի տրամադրումը, գ) բանկերի վերակապիտալացմանը 2 մլրդ դոլարի հատկացումը, դ) նոր պարտքային պարտավորությունների երաշխիքների տրամադրումը՝ 19,1 մլրդ դոլար ծավալով, ե) բանկերի իրացվելիության բարձրացման նպատակով 6 մլրդ դոլարի հատկացումը: Ոչ դրամական բնույթի միջոցառումներից են. ա) ներդրումային բանկերի ազգայնացումը, բ) բանկային տոկոսադրույքների նվազեցումը, գ) մինչև 49,2 հազ. եվրո ավանդների փոխհատուցման երաշխավորումը, դ) կայունացնող հիմնադրամի ստեղծումը:

ՖԻՆԼԱՆԴԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներն են. ա) նոր պարտքային պարտավորությունների երաշխիքների տրամադրումը՝ 50 մլրդ եվրո գումարով, բ) ազգային բանկերի վերակապիտալացումը՝ 4 մլրդ եվրո գումարով, գ) տնտեսության աշխուժացման ծրագրի հաստատումը՝ 400 մլն. եվրո գումարով, որի շնորհիվ ստեղծվելու են նաև 25 հազար նոր աշխատատեղեր: Ոչ դրամական բնույթի միջոցառում է միայն մինչև 50 հազար եվրո ավանդների փոխհատուցման երաշխավորումը:

ՆՈՐՎԵԳԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) պետական պարտատոմսերի թողարկումը՝ 46 մլրդ եվրոյի չափով, բ) բիզնեսի հարկային արտոնությունների տրամադրումը՝ 500 մլն դոլարի չափով, գ) ենթակառուցվածքների ու տարածաշրջանների զարգացման ծրագրի հաստատումը 1,5 մլրդ դոլարի չափով, դ) ճանապարհային շինարարությունը և այլն (նշված միջոցառումների շնորհիվ բյուջետային ծախսերն ավելանում են 6,25%-ով՝ ի հաշիվ «Նավթային ընկերության հիմնադրամի»), ե) 14,8 մլրդ դոլար կապիտալով 2 հիմնադրամների ստեղծումը՝ բանկային վարկավորման օգնության և կորպորատիվ պարտատոմսերի ձեռքբերման համար, գ) բանկերի ղեկավարների աշխատավարձի առավելագույն

չափի սահմանում: Ոչ դրամական բնույթի միջոցառումներից են. ա) բանկային տոկոսադրույքների իջեցումը, բ) մինչև 227 հազ. եվրո ավանդի վերադարձի երաշխավորումը, գ) փոքր բանկերին Կենտրոնական բանկից հատկացված տոկոսադրույքով, մինչև 2 տարի ժամկետով, վարկ վերցնելու հնարավորություն տալը՝ 120 մլն. եվրոյի սահմաններում և այլն:

ԴԱՆԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներն են. ա) ազգային բանկերի վերակապիտալացումը՝ 100 մլրդ կրոն կամ 134 մլն դոլար արժողությամբ, բ) բանկային կազմակերպությունների համար 20 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ վարկային գծի բացումը, ոչ դրամական բնույթի են. ա) ավանդների 100%-ով վերադարձի երաշխիքի տրամադրումը, բ) ապահովագրական հիմնադրամի ստեղծումը (վարկային կազմակերպությունների կողմից)՝ 5,1 մլրդ դոլար ծավալով, գ) բանկերի նոր բաժնետոմսերի գնումը, փոխանակումը և թողարկումը արգելելը:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) երկրի 8 խոշորագույն բանկերին մոտ 87 մլրդ դոլարի հատկացումը, բ) ազգային բանկերի պարտքերի գնումը (մարումը)՝ 100 մլրդ դոլար գումարով, գ) երիտասարդ ընտանիքներին բնակարան ձեռքբերելու գեղչի (30%) տրամադրումը, դ) Անգլիայի բանկի կողմից 306 մլրդ դոլար ծավալով վարկերի տրամադրումը, ե) ցածր վարձատրվող աշխատողներին, ՓՄՁ-ներին ու տնային տնտեսություններին օգնության ծրագրի հաստատումը՝ 20 մլրդ ֆունտ ստեռլինգ արժողությամբ, գ) բանկային վիճահարույց ակտիվների գնման ծրագրի հաստատումը՝ 50 մլրդ ֆունտ ստեռլինգ արժողությամբ, ե) «Տնտեսության խթանման ծրագրի» հաստատումը՝ 150 մլրդ ֆունտ ստեռլինգ արժողությամբ: Ոչ դրամական բնույթի միջոցառումներն են. ա) բանկային համակարգին երաշխիքների տրամադրումը՝ 383 մլրդ դոլարի շրջանակում, բ) խոշոր բանկերի մասնակի ազգայնացումը, գ) հաշվարկային ու բազային տոկոսադրույքների նվազեցումը, դ) ավանդների 100%-ոց վերադարձի ապահովումը և դրանց չափի բարձրացումը 35 հազարից մինչև 50 հազար ֆունտ ստեռլինգի, ե) ազգային ավտոարտադրողներին 2,3 մլրդ ֆունտ ստեռլինգի օգնության տրամադրումը, գ) սնանկացած դպրոցների ազգայնացումը:

ԻՌԼԱՆԴԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներն են. ա) երկրի երեք խոշորագույն բանկերում արտոնյալ բաժնետոմսերի գնմամբ՝ 5,5 մլրդ եվրոյի ներդրումը, բ) պարտքային պարտավորությունների, ակտիվների գնման նպատակով 400 մլրդ եվրո արժողությամբ ծրագրի հաստատումը, գ) երկու առաջատար բանկերի վերակապիտալացման ծրագրի հաստատումը՝ 8 մլրդ եվրո արժողությամբ: Իռլանդիայի կառավարությունն իրականացրել է ոչ դրամական բնույթի ընդամենը մեկ միջոցառում՝ բանկային ավանդների 100%-ոց վերադարձի երաշխիքի տրամադրումը՝ 100 մլրդ եվրոյի շրջանակում:

ԱՎՍՏՐԱԼԻԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումը 26 մլրդ դոլար արժողությամբ տնտեսությանը խթանող ծրագրերի հաստատումն է, որով նախատեսված է բնակելի տների ու դրպրոցների կառուցում, նոր տեխնոլոգիաների ներդրում և այլն, ինչի շնորհիվ կպահպանվեն ≈ 90 հազար աշխատատեղեր, իսկ տնտեսական աճի տեմպը 0,5%-ից կհասնի 1%-ի: Ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) ռեզերվային բանկի կողմից բազային դրույքաչափերի նվազեցումը, բ) ավանդների 100%-անոց վերադարձի երաշխավորումը, գ) ազգային բանկերին 5 տարի ժամկետով երաշխիքների տրամադրումը:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԻՆԱՍՏԱՆՐ, ՃԱԿՈՆԻԱՆ, Հարավային Կորեան դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումների մասով համաձայնության են եկել 80 մլրդ դոլար արժողությամբ «Արժույթային պահուստ» ստեղծելու հարցի շուրջ:

ՃԱՊՈՆԻԱ: Կառավարության ձեռնարկած դրամական բնույթի միջոցառումներից են. ա) կայունացնող միջոցառումների փաթեթի հաստատումը՝ 54 մլրդ դոլար արժողությամբ, որը ծախսվում է փոքր բիզնեսի վարկավորման և աշխատանքից ազատվածներին նպաստների տրամադրման նպատակով, բ) առևտրային բանկերի բաժնետոմսերի գնման նպատակով 22 մլրդ դոլարի հատկացումը, գ) 6,6%-ով պետական ծախսերի և 31%-ով պետական արժեթղթերի թողարկման ավելացումները՝ 255 մլրդ դոլար արժողությամբ, դ) 13 մլրդ դոլար արժողությամբ արտոնյալ վարկերի տրամադրումը ֆինանսական կազմակերպություններին, ե) 16,7 մլրդ դոլարի հատկացումը ՓՄՁ-ներին, որոնցում զբաղված է աշխատող ճապոնացիների 70%-ը, գ) ճապոնական ընկերությունների բաժնետոմսերի գնումը, է) 11,2 մլրդ դոլարի հատկացումը՝ մասնավոր բանկերի բաժնետոմսերի գնման նպատակով:

Բացի վերոնշյալներից, Ճապոնիայի կառավարությունը դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներ է ձեռնարկել նաև երկրի սահմաններից դուրս, որոնց վերաբերում են. ա) ԱՄՆ-ին՝ 98 մլրդ դոլարի տրամադրումը՝ զարգացող երկրներին օգնելու նպատակով, բ) ԱՄՆ-ի ԴՊՀ-ի (Federal Reserve) հետարժութային սվոպերի կրկնապատկումը (60-ից դարձվեց 120 մլրդ դոլար), գ) 1 մլրդ դոլարի հատկացումը՝ ասիական տարածաշրջանի ասիական զարգացող երկրների բանկերին՝ առևտրի զարգացումը վարկավորելու նպատակով: Ոչ դրամական բնույթի միջոցառումներից են. ա) տների սեփականատերերից գանձվող հարկի նվազեցումը, բ) Կենտրոնական բանկի կողմից հաշվարկային դրույքաչափերի նվազեցումը, գ) բանկային ավանդների վերադարձի և միջբանկային վարկերի երաշխիքների տրամադրումը՝ 143 մլրդ դոլար ծավալով:

ՉԻՆԱՍՏԱՆ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներն են. ա) երկրի տնտեսական աճի խթանմանն ուղղված 586 մլրդ դոլար ծրագրի հաստատումը՝ ճանապարհների ու բնակ-շինարարու-

թյան և նոր տեխնոլոգիաների ներդրման նպատակով, բ) նախա-գծերի ֆինանսավորման նպատակով թայվանյան ներդրողներին 130 մլրդ յուանի տրամադրումը՝ 3 բանկերի միջոցով, գ) բջջային կապի զարգացման նպատակով 40 մլրդ դոլարի տրամադրումը երկու տարում, դ) 1,9 մլրդ դոլարի տրամադրումը երկրի արևելքի և հարավի ավիա-փոխադրողներին, որոնց եկամուտները պակասել են ուղևորների թվի կրճատման հետևանքով, ե) ավիաընկերություններին 360 մլն. դոլարի հարկային արտոնության և 26 մլրդ դոլարի վարկերի տրամադրումը, զ) Agricultural Bank of China բանկի վերակապիտալացման 19 մլրդ դոլարի ծրագրի հաստատումը, է) Էլեկտրոնիկայի զարգացման համար 584 մլրդ դոլարի պետական սուբսիդիաների ծրագրի հաստատումը: Ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) ՓՄՁ-ների հարկերի կրճատումը, բ) Կենտրոնական բանկի կողմից 5 խոշորագույն բանկերի համար պահուստավորման նորմատիվի և հաշվարկային դրույքաչափի նվազեցումը, գ) երկրի արժույթային պահուստների կառուցվածքի փոփոխումը՝ հոգուտ ոսկու բաժնի ավելացման, դ) ներմուծման ու արտահանման սահմանափակումների և վարկավորման մեղմացումը, ե) ազգային արժույթի փոխարժեքի կայունացմանը և զ) խոշոր պետական մետաղաձուլական ընկերություններին աջակցելը:

ՀՆԴԿԱՍՏԱՆ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) 4,0 մլրդ դոլարի տնտեսության աջակցության ծրագրի հաստատումը, բ) պետական պարտատոմսերի լրացուցիչ թողարկումը 6,0 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ: Ոչ դրամական բնույթի միջոցառումներից են. ա) վարկային տոկոսադրույքների նվազեցումը, բ) պահուստավորման պարտադիր նորմատիվի նվազեցումը՝ վարկավորման պայմանների թեթևացման նպատակով:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) կորպորատիվ պարտատոմսերում 6,7 մլրդ դոլարի ներդրումների իրականացումը, բ) Korea Asset Management Corporation պետական հիմնադրամի կողմից բանկերից 900 մլրդ դոլարի արժեզրկված շինարարական վարկերի հետգնումը, գ) ՓՄՁ-ներին 37 մլրդ դոլարի չափով վարկային երաշխիքների տրամադրումը: Ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) բանկերի ներքին պարտքային պարտավորությունների երաշխիքների տրամադրումը, բ) Կենտրոնական բանկի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը:

ՎԻԵՏՆԱՄ: Իրականացվել են միայն ոչ դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներ, որոնցից է խոշոր արտահանողներին աջակցելու նպատակով ազգային արժույթի արժեզրկումը:

ՀՈՆԿՈՆԳ: Ձեռնարկվել է միայն դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառում. ստեղծվել է «Չնախատեսված ծախսերի պա-

հուստ»՝ անհրաժեշտության դեպքում բանկերի վերակապիտալացում կատարելու համար:

ՄԻՆԳԱՊՈԻՐ: Միայն դրամական բնույթի հակաճգնաժամային, այն էլ մեկ միջոցառում է ձեռնարկվել. 4,5 մլրդ սինգապուրյան դոլար արժողությամբ աշխատանքային վարկերի տրամադրման ծրագրով պետք է գործատուներին փոխհատուցվեն ֆինանսական ճգնաժամի պայմաններում աշխատատեղերի պահպանման ծախսերը:

ԹԱՅՎԱՆ: Հակաճգնաժամային միջոցառումներն են. դրամականի մասով՝ ենթակառուցվածքի զարգացման 2 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ ծրագրերի հաստատումը, իսկ ոչ դրամականի մասով՝ ավանդների վերադարձի երաշխավորումը և հարկերի ու սուբսիդիաների կրճատումը՝ 4 մլրդ դոլար ընդհանուր գումարով:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ: Քուվեյթի կառավարության ձեռնարկած դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից են. ա) երկրի մեծությամբ երկրորդ բանկի բաժնետոմսերի գնումը, բ) ազգային բանկերին աջակցելը՝ 5 մլրդ դոլար ընդհանուր գումարով:

Սաուդյան Արաբիան 2,67 մլրդ դոլար է հատկացրել սոցիալական ուղղվածության բանկին՝ քիչ եկամուտ ունեցողներին անտոկոս վարկերի տրամադրման նպատակով, իսկ ազգային բանկերի վերաարտոնագրման ծրագրով:

Լրաբեր 3-12

հատկացրել է 3,0 մլրդ դոլար:

Կատարի ազգային բանկերին վերակապիտալացման նպատակով հատկացվել է 6 մլրդ դոլար:

ԱՐԳԵՆՏԻՆԱ: Դրամական բնույթի հակաճգնաժամային միջոցառումներից է. ա) շինարարության 21,5 մլրդ դոլար արժողությամբ ծրագրի հաստատումը՝ նպատակ ունենալով շինարարական արդյունաբերության մեջ կրկնապատկելու զբաղվածների թիվը և հասցնելու 770 հազարի: Ոչ դրամական բնույթի միջոցառումներից են. ա) երկրի խոշորագույն ավիաընկերությունների ազգայնացման օրենքի ընդունումը, բ) մասնավոր կենսաթոշակային ֆոնդի ազգայնացումը, գ) կապիտալ ներմուծողների մասով հարկային արտոնությունների սահմանումը:

ԲՐԱԶԻԼԻԱ: Դրամական բնույթի միջոցառումներից հիմնականը 6,0 մլրդ դոլար արժողությամբ բարեկեցության հիմնադրամի ստեղծումն է, իսկ ոչ դրամական բնույթի՝ 2 խոշոր բանկերի բաժնետոմսերի գնման իրավունքի ձեռքբերումը:

ՂԱԶԱԽՍՏԱՆ: Դրամական բնույթի միջոցառումներն են. ա) երեք տարվա ընթացքում ագրոարդյունաբերական համալիրին 4 մլրդ դոլարի հատկացման ծրագրի հաստատումը, բ) ՓՄՁ-ներին 1 մլրդ դոլարի վարկի տրամադրումը՝ ոչ ավելի, քան տարեկան 14%-ով, գ) 4 համակարգաստեղծ բանկերի կապիտալացմանը 4 մլրդ դոլարի հատկացումը, դ) «Անկայուն ակտիվների ֆոնդի» ստեղծումը, որի նպատակը կասկածելի ակտիվների հետգնումն ու դրանց կառավարումն է, ե) հիփոթեքային վարկի տոկոսադրույքների նվազեցումը (այն 12,5% է դարձել) և լրացուցիչ վարկային միջոցների տրամադրումը:

Ոչ դրամական բնույթի միջոցառումներն են. ա) նավթի, գազի արտահանումը, գրոյական դրույքաչափով հարկումը, բ) ԱՊՀ-ի տարածքում երկաթուղային բեռնափոխադրումների սակագների իջեցումը, գ) ԲՏԱ բանկի ազգայնացումը, դ) թենգեի փոխարժեքի կայունացումը՝ մրցունակ ներդրումային միջավայր ապահովելու նպատակով, ե) հիփոթեքային վարկավորման 20 տարվա ժամկետի սահմանումը և տոկոսադրույքների նվազեցումն ու դրանց տարբերակումը. սոցիալապես անապահով խավի համար՝ 9%, այլ փոխառուների համար՝ 11%, զ) ազգային բանկի կողմից վերաֆինանսավորման դրույքի և պահուստավորման նորմատիվի նվազեցումը, է) ՓՄՁ-ների ստուգումների դադարեցումը:

ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ АНТИКРИЗИСНЫХ МЕРОПРИЯТИЙ

АРУТЮНЯН В. Л.

Резюме

Финансово-экономический кризис в мировом масштабе выдвинул перед правительствами стран необходимость принятия мер как денежного, так и неденежного характера. Опыт антикризисных мероприятий стран Евросоюза, Восточной Азии и Ближнего Востока, как и 39 других стран свидетельствует о том, что из мероприятий денежного характера самыми распространенными являются приобретение правительством ценных бумаг финансовых институтов, снижение налоговой нагрузки, предоставление государственных гарантий, финансовое содействие автопроизводителям и авиакомпаниям, а из мер неденежного характера наиболее распространены формирование фондов, активизация организации образовательных программ, гарантирование возврата вкладов и др.